Հասարակական ակումբում կը կայանայ ռուսերէն լեզուով զրոյց հայ գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի առիթով։ Կը մասնակցեն Ակունեան, Աթանասեան, Քալանթար, Մալխասեան և ուրիշները։ Վերջում համերգային բաժին՝ Ն. Կովալենսկու աշակերտների մասնակցութեամբ։

Թիֆլիսի կանանց բարձր կուրսերի չքաւոր ունկնդրուհիների օգտին, «Արտիստակ. Ընկ.» ամարային շէնքում ապրիլի 19-ին նշանակուած զրօսանքը, որ չկայացաւ անձրևի պատճառով, նշանակուած է այսօր, ապրիլի 27-ին։ Դրուած նպատակն անշուշտ շատերին կը դրդի գնալ այդ զրօսանքին։